



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ, ք. Գյումրի, Անկախության Հրապարակ 7

հեռ. (+374 312) 5-93-46, shirak@court.am

ՇԴ25-Ե-

Գործ ՇԴ/0057/01/24

01.07.2025թ.

ՏՈՒԺՈՂ ՎԼԱԴԻՄԻՐ ԼՅՈՎԱՅԻ ՄԽԻԹԱՐՅԱՆԻՆ

/ք. Գյումրի, Կուրդինյան փողոց, 59-րդ տուն/

Ուղարկվում է Մերուժան Գևորգի Առաքելյանի վերաբերյալ թիվ ՇԴ/0057/01/24 քրեական գործով Շիրակի մարզի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2025 թվականի հունիսի 06-ի դատավճռի օրինակը:

Առդիր՝ դատավճիռը «18» թերթից:

ԴԱՏԱՎՈՐԻ ՕԳՆԱԿԱՆ

Ա.ՓԱՆՈՍՅԱՆ



Դ Ա Տ Ա Վ Ճ Ի Ռ
Հ Ա Ն Ո Ւ Ն Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետ նաև՝ Դատարան),

Նախագահությամբ՝ դատավոր
քարտուղարությամբ՝
մասնակցությամբ՝
հանրային մեղադրող
պաշտպան
մեղադրյալ
տուժողներ՝

Ա.ՇՏՈՅԱՆԻ
Վ.ԹԱՄԱՋՅԱՆԻ

Կ.ՀՈՎՍԵՓՅԱՆԻ
Լ.ԱԶԻԶԲԵԿՅԱՆԻ
Մ.ԱՌԱՔԵԼՅԱՆԻ
Լ.ՄԽԻԹԱՐՅԱՆԻ
Հ.ԽԱԶԱՏՐՅԱՆԻ
Վ.ՄԽԻԹԱՐՅԱՆԻ
Ա.ԴԱՎԹՅԱՆԻ

Տուժողի լիազոր ներկ.

2025 թվականի հունիսի 06-ին

ք. Գյումրիում

դռնբաց դատական նիստում, արագացված վարույթի կարգով, քննելով քրեական գործն ըստ մեղադրանքի Մերուժան Գևորգի Առաքելյանի (ծնված 14.12.1991 թվականին Շիրակի մարզի Գյումրի քաղաքում, ազգությամբ հայ, ՀՀ քաղաքացի, միջին մասնագիտական կրթությամբ, հանդիսանում է անհատ ձեռնարկատեր, ամուսնացած, խնամքին ունի երկու անչափահաս երեխա, նախկինում չդատված, հաշվառված և փաստացի բնակվում է ք. Գյումրի, Ա.Մանուկյան փողոց, 1-ին նրբանցք, տուն 49 հասցեում) ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի 2-րդ մասով,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

2022 թվականի հոկտեմբերի 31-ին ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի 1-ին մասով կազմվել է քրեական վարույթ նախաձեռնելու վերաբերյալ թիվ 23107522 արձանագրությունը:

Նախաքննական մարմնի 2022 թվականի հոկտեմբերի 31-ի որոշմամբ Հայկանուշ Սաշայի Մխիթարյանը թիվ 23107522 քրեական վարույթով ճանաչվել է տուժող:

Նախաքննական մարմնի 2022 թվականի նոյեմբերի 09-ի որոշմամբ թիվ 23107522 քրեական վարույթով մահացած տուժող Հայկանուշ Սաշայի Մխիթարյանի փոխարեն տուժող է ճանաչվել նրա թողին՝ Վլադիմիր Լյովայի Մխիթարյանը:

Նախաքննական մարմնի 2023 թվականի հոկտեմբերի 06-ի որոշմամբ Հայաստան Արտուշի Բաջատյանը, Լյովա Վլոդյայի Մխիթարյանը և Նորայր Սամվելի Հակոբյանը թիվ 23107522 քրեական վարույթով ճանաչվել են տուժողներ:



և թույլ է տվել ՃԵԿ-ի 62-րդ կետի ու «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին հակասող գործողություններ, այն է՝ չի ետևելով առջևում տիրող ճանապարհատրանսպորտային իրադրության զարգացմանն ու համընթաց ուղղությամբ ընթացող «OPEL ZAFIRA 1.8L» մակնիշի 36 AQ 827 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի առկայությանը, չընտրելով երթևեկության համապատասխան անվտանգ ու սահուն ռեժիմ, մոտենալով առջևում իր երթևեկության ուղեմասով ընթացող «OPEL ZAFIRA 1.8L» մակնիշի 36 AQ 827 հաշվառման համարանիշի ավտոմեքենային ու ժամանակին կատարված համապատասխան միջոցներ չձեռնարկելով այդ ավտոմեքենայի նկատմամբ անվտանգությունն ապահովող միջոտարածություն պահպանելու համար, իրականացրել է իր վարած ավտոմեքենայի ընթացքի ոչ պատշաճ և վտանգավոր կառավարում, տեխնիկական տեսակետից ստեղծել է վթարային իրադրություն, ինչի հետևանքով բախվել է «OPEL ZAFIRA 1.8L» մակնիշի 36 AQ 827 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցին, որի արդյունքում նշված ավտոմեքենան կողաշրջվել է, որի հետևանքով էլ անգգուշությամբ առաջացրել է «OPEL ZAFIRA 1.8L» մակնիշի 36 AQ 827 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցի ուղևոր Հայկանուշ Սաշայի Մխիթարյանի մահը, իսկ «OPEL ZAFIRA 1.8L» մակնիշի 36 AQ 827 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցի ուղևորներ՝ Հայաստան Արտուշի Խաչատրյանի առողջությանը՝ գանգի թաղի, հիմի և դիմային հատվածի ոսկրերի կոտրվածքների, գլխուղեղի միջին աստիճանի սալքարդի, դեմքի շրջանների քերծվածքների, պատռված վերքերի և ենթամաշկային հեմատոմայի, աջ թոքի սալքարդի ձևով անգգուշությամբ պատճառել է կյանքին վտանգ սպառնացող ծանր վնաս, Լյովա Վուդոյայի Մխիթարյանի առողջությանը՝ գանգուղեղային փակ վնասվածքի, գլխի փափուկ հյուսվածքների սալքարդի, ճակատային շրջանի ենթամաշկային հեմատոմայի, գոտկային 1-2-3 ողերի աջակողմյան լայնական ելունների կոտրվածքների ձևով անգգուշությամբ պատճառել է միջին ծանրության վնաս, իսկ «HYUNDAI ELANTRA 1.8L» մակնիշի 04 XX 505 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցի ուղևոր Նորայր Սամվելի Հակոբյանի առողջությանը՝ ծախից ճակատային, աջ ազդրի շրջանների քերծվածքների, աջ անրակոսկրի փակ կոտրվածքի, աջ թոքի սալքարդի և քթի միջնապատի հեմատոմայի ձևերով անգգուշությամբ պատճառել է միջին ծանրության վնաս:

Արագացված վարույթ.

Նախնական դատախոսների ընթացքում մեղադրյալ Մերուժան Գևորգի Առաքելյանը միջնորդեց կիրառել արագացված վարույթ:

Հանրային մեղադրողի կողմից մեղադրանքի փաստական հիմքը և մեղադրյալին վերագրվող արարքի իրավական որակումը ներկայացնելուց հետո Մ.Առաքելյանը հայտարարեց, որ իրեն ներկայացված մեղադրանքը պարզ է, համաձայն է դրա հետ, պնդում է արագացված վարույթ կիրառելու մասին իր միջնորդությունը, այն ներկայացրել է կամավոր՝ պաշտպանի հետ խորհրդակցելուց հետո, գիտակցում է արագացված վարույթ կիրառելու հետևանքները:

Պաշտպան Լ.Ազիզբեկյանը նշեց, որ իր կողմից մեղադրյալին պարզաբանվել են արագացված վարույթ կիրառելու հետևանքները և միանում է միջնորդությանը:

Հանրային մեղադրող Կ.Հովսեփյանը և տուժողներ՝ Լ.Մխիթարյանը, Հ.Խաչատրյանը և Վ.Մխիթարյանը չառարկեցին դատական քննության արագացված կարգ կիրառելու դեմ: Իսկ տուժող Ն.Հակոբյանն էլ դիմում է հասցեագրել Դատարանին, որով հայտնել է, որ Մերուժան Առաքելյանի դեմ բողոք, պահանջ չունի և միաժամանակ հեռախոսազանգով էլ տեղեկացրել է, որ դատական քննության արագացված կարգ կիրառելու դեմ առարկություններ չունի:

Դատարանը, համոզվելով, որ առկա է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 464.1-ին հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքը, բացակայում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 464.1-ին հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ արագացված վարույթի կիրառումը



բացառող հանգամանքները, որոշեց արձանագրային որոշմամբ բավարարել արագացված վարույթ կիրառելու մասին մեղադրյալի միջնորդությունը և նշանակել լրացուցիչ դատախազներ:

Դատարանի իրավական վերլուծությունները.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 464.4 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արագացված վարույթի արդյունքով դատարանը կայացնում է մեղադրական դատավճիռ սույն օրենսգրքի 347-350-րդ հոդվածներով սահմանված կարգով՝ հաշվի առնելով սույն հոդվածով նախատեսված առանձնահատկությունները:

Առաջադրված մեղադրանքը մեղադրյալ Մերուժան Գևորգի Առաքելյանի կողմից ընդունելու և արագացված վարույթ կիրառելու պայմաններում Դատարանը, գործով ձեռք բերված ապացույցների ընդհանուր կարգով սահմանված հետազոտություն չկատարելով, արձանագրում է, որ մեղադրյալ Մերուժան Առաքելյանը կատարել է իրեն մեղսագրված հանցանքը, այն ճիշտ է որակված, համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներին:

Դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքների հիման վրա Դատարանը մեղադրյալի անձը բնութագրող տվյալ է համարում նախկինում դատապարտված չլինելը:

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն՝ «1. Քրեական պատասխանատվությունը կամ պատիժը մեղմացնող հանգամանքներ են՝ (...) 4) պատիժ նշանակելու պահին հանցանք կատարած անձի խնամքի տակ անչափահասի կամ հաշմանդամություն ունեցող անձի առկայությունը, բացառությամբ այն դեպքերի, երբ հանցանքը կատարվել է խնամքի տակ գտնվող անձի նկատմամբ, (...) 12) հանցանք կատարած անձի կողմից հանցագործությամբ պատճառված վնասը կամովին հատուցելուն կամ այլ կերպ հարթելուն ուղղված գործողություն կատարելը, (...) 2. Պատիժ նշանակելիս դատարանը կարող է հաշվի առնել նաև սույն հոդվածի 1-ին մասով չնախատեսված մեղմացնող այլ հանգամանքներ (...):»:

Դատարանը մեղադրյալի քրեական պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքներ է դիտարկում խնամքին անչափահաս երկու երեխաների առկայությունը, ինչպես նաև այն, որ իրեն մեղավոր է ճանաչել, նախաքննության ընթացքում տվել է խոստովանական ցուցմունք և հանցագործությամբ պատճառված վնասը կամովին հատուցելուն կամ այլ կերպ հարթելուն ուղղված գործողություն է կատարել:

Դատարանն արձանագրում է, որ մեղադրյալի քրեական պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքներ առկա չեն:

ՀՀ քրեական օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվության, պատժի կամ քրեաիրավական ներգործության այլ միջոցների ենթարկելը կամ քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելը պետք է լինի արդարացի՝ ապահովելով ինչպես կիրառվող օրենսդրության, այնպես էլ պետական հակազդեցության համաչափությունը կատարված հանցանքին, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը»:

ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդված «1. Հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայի սահմաններում՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթները:

Պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործությամբ պատճառված վնասի բնույթով և չափով, հանցագործության եղանակով, տեղով, ժամանակով, հանցագործության շարժառիթներով և նպատակներով, դիտավորության կամ անգգուշության տեսակով, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքներով, ինչպես նաև



նշանակվող պատժի՝ հանցավորի վերասոցիալականացման և իրավահպատակ վարքագծի ձևավորման գործընթացի ու նրա ընտանիքի կենսապայմանների վրա ազդեցությամբ:

3. Ազատությունից զրկելու հետ կապված պատիժ կարող է նշանակվել, եթե դատարանը հիմնավորի, որ առավել մեղմ պատժատեսակը չի կարող ապահովել պատժի նպատակները: (...):»

«Հ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Պատժի նպատակներն են՝ վերականգնել սոցիալական արդարությունը, վերասոցիալականացնել պատժի ենթարկված անձին և կանխել հանցագործությունները»:

Մեջբերված իրավական նորմերը Վճռաբեկ դատարանը վերլուծել և դրանց վերաբերյալ իրավական դիրքորոշումներ է հայտնել թիվ ՎԲ-50/07, ՎԲ-142/07, ՎԲ-192/07, ՎԲ-201/07, ԵՇԴ/0029/01/08, ԵԿԴ/0042/01/11, ինչպես նաև մի շարք այլ գործերով կայացված որոշումներում: Նշված որոշումներում Վճռաբեկ դատարանի ձևավորած կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ պատժի արդարությունը դրսևորվում է հանցագործության և քրեաիրավական ներգործության միջոցների (պատժի) համաչափության ապահովմամբ: Պատիժն արդարացի է, եթե համաչափ է կատարված հանցագործությանը, ինչպես նաև բավարար պատժի նպատակներին հասնելու տեսանկյունից: Պատժի արդարության պահանջներից նահանջելը կարող է հանգեցնել չափազանց մեղմ կամ չափազանց խիստ պատժի նշանակման: Քրեական օրենքը համընդհանուր բնույթ ունի, իսկ արարքը և հանցավորի անձը կոնկրետ են: Հետևաբար, կոնկրետ գործով պատիժ նշանակելիս դատարանի ներքին համոզմունքը ձևավորվում է կատարված արարքի հանրային վտանգավորության բնույթի ու աստիճանի, հանցավորի անձի, պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների վերլուծության հիման վրա: Նշված հանգամանքների գնահատման ժամանակ դատարանը պետք է ելնի ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված՝ պատժի նպատակների իրացումն ապահովելու անհրաժեշտությունից:

Այսպիսով, պատիժ նշանակելիս դատարանը, ի թիվս այլ հանգամանքների, պետք է հաշվի առնի արարքի հանրային վտանգավորության աստիճանը և բնույթը: Հանցագործության այս հատկանիշներին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Գ.Մադաթյանի գործով որոշման մեջ՝ իրավական դիրքորոշում արտահայտելով այն մասին, որ «Արարքի հանրային վտանգավորության բնույթը հանցագործության որակական կողմն է, այն որոշվում է մեղքի ձևի և տեսակի, հանցագործության նպատակի և շարժառիթի, ինչպես նաև քրեական օրենսդրությամբ պահպանվող հասարակական հարաբերության՝ հանցանքի կատարման պահին ունեցած սոցիալական նշանակության վերաբերյալ փաստական տվյալների ամբողջությամբ:

Արարքի հանրային վտանգավորության աստիճանի որոշման ժամանակ դատարանը պետք է բացահայտի կատարված հանցագործությամբ պատճառված վնասի չափը, հանցագործության կատարման եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, հանցակցության դեպքում՝ հանցավորի կատարած արարքը և հանցագործությանը նրա մասնակցության աստիճանը» (տե՛ս Գարուշ Մադաթյանի գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի փետրվարի 17-ի թիվ ԵՇԴ/0029/01/08 որոշման 14-րդ կետը):

Արմեն Սուրիկի Շահբազյանի վերաբերյալ 2014 թվականի օգոստոսի 15-ի ԵՇԴ/0143/01/13 որոշման մեջ ՀՀ Վճռաբեկ դատարանը դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) դատարանի կողմից արարքի հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի բացահայտումը սերտորեն կապված է պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների հետ՝ թե՛ արդարացի պատիժ նշանակելու և թե՛ պատժի անհատականացման համատեքստում: Հանցագործության հանրային վտանգավորության տիպային բնութագիրն արտացոլվում է օրենսդրի կողմից սահմանված սանցքային, իսկ յուրաքանչյուր կոնկրետ գործով արարքի հանրային վտանգավորության աստիճանը գնահատականը տրվում է դատարանի կողմից՝ հանցագործության կատարման



հանգամանքների, հանցավորի անձնավորության, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների հիման վրա, և արտահայտվում է կոնկրետ պատժի տեսքով (տե՛ս mutatis mutandis Նարեկ Սարգսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0042/01/11 որոշման 16-17-րդ կետերը): Հանցագործության կատարման եղանակի, գործիքների, միջոցների, պատճառված վնասի չափի և բնույթի (հանրորեն վտանգավոր հետևանքների), հանցավորի մտադրության իրականացման աստիճանի, շարժառիթների, նպատակների բացահայտումը մեծապես ազդում է պատժի տեսակի ընտրության, ինչպես նաև դրա՝ առավել կամ նվազ խիստ լինելու վրա: (...):

ՀՀ քրեական օրենսգրքի 77-րդ հոդվածի համաձայն՝ «(...) 4.1. Արագացված վարույթ կիրառելու դեպքում պատիժը չի կարող գերազանցել սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված առավել խիստ պատժատեսակի համար նախատեսված առավելագույն չափի կամ ժամկետի երեք քառորդը: Եթե առավել խիստ պատժատեսակի երեք քառորդը պակաս է ստացվում սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված առավել խիստ պատժատեսակի նվազագույն չափից կամ ժամկետից, ապա այն չի կարող պակաս լինել նվազագույն չափից կամ ժամկետից: (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 464.4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Դատարանը արագացված վարույթի արդյունքով մեղադրական դատավճիռ կայացնելիս նշանակում է պատիժ՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի ընդհանուր մասի վերաբերելի դրույթները»:

ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի համաձայն՝ «1. Ավտոմեքենա կամ մեխանիկական այլ տրանսպորտային միջոց վարող անձի կողմից ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջ կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման անվտանգությունն ապահովող կանոն խախտելը, որը մարդու առողջությանն անգուշությամբ պատճառել է ծանր կամ միջին ծանրության վնաս՝

պատժվում է տուգանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուրից երկու հարյուր ժամ տևողությամբ, կամ՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երկուսից հինգ տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որն անգուշությամբ առաջացրել է մարդու մահ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով»:

Վերը նշված իրավական կարգավորումների և ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից ձևավորած իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով մեղադրյալ Մերուժան Առաքելյանի նկատմամբ նշանակվող պատժի տեսակի, չափի և դրա կրման հարցերին՝ Դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի 2-րդ մասի սանկցիայի վերլուծությունից երևում է, որ այն որպես պատիժ նախատեսում է ազատազրկում երկուսից հինգ տարի ժամկետով, ուստի Դատարանն այլ պատիժ չի կարող նշանակել, քան ազատազրկման ձևով պատիժը:

ՀՀ Վճռաբեկ դատարանը Սերոբ Ֆրունզիկի Սարգսյանի վերաբերյալ 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ՍԴ/0109/01/12 որոշմամբ իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ «... պատժի նշանակման իրավական շրջանակները սահմանված են ՀՀ քրեական օրենսգրքով: Դրա հետ մեկտեղ, սակայն, վերոնշյալ օրենքը դատարանին հնարավորություն է տվել որոշակի սկզբունքներով (...) պահպանմամբ, իր ներքին համոզմանը և իրավագիտակցությանը



համապատասխան, ՀՀ քրեական օրենսգրքի Ընդհանուր և Հատուկ մասերով նախատեսված սահմաններում որոշել պատժի տեսակն ու չափը: Այլ կերպ՝ ուրվագծելով կոնկրետ հանցանքի համար նշանակման ենթակա պատժի առավելագույն և նվազագույն սահմանները՝ ՀՀ քրեական օրենքը դատարանին տվել է այդ շրջանակում հայեցողություն դրսևորելու հնարավորություն:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի գրեթե բոլոր հոդվածների սանկցիաներում ամրագրված վերոնշյալ մոտեցումը պայմանավորված է այն տրամաբանությամբ, որ քրեական օրենքը համընդհանուր բնույթ ունի, իսկ արարքը և հանցավորի անձը կոնկրետ են: Ուստի կոնկրետ արարքի և անձի նկատմամբ համընդհանուր քրեական օրենքով նախատեսված սանկցիան կիրառելիս դատարանը պետք է որոշակի հայեցողություն դրսևորի:

Վերոգրյալից Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ առանց դատարանի հայեցողության պատժի անհատականացումն անհնար է (...):»

Հոդվածի սանկցիայի շրջանակներում կոնկրետ պատժատեսակ և պատժաչափ ընտրելիս դատարանը թեև օժտված է իր ներքին համոզմունքին և իրավագիտակցությանը համապատասխան որոշակի հայեցողություն դրսևորելու ազատությամբ, սակայն այն չի կարող բացարձակ և կամայական բնույթ կրել:

Պատիժ նշանակելիս դատարանի հայեցողությունը սահմանափակվում է օրենքով կանխորոշված որոշակի շրջանակներով՝ հանցավոր արարքի հանրային վտանգավորության բնույթով և աստիճանով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքներով, որոնք դատարանն անպայման պետք է հաշվի առնի պատժի արդարացիության ապահովման համար (...)» (տե՛ս Էրվարդ Ադամյանի գործով Վճռաբեկ դատարանի 2014 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ ԵԷԴ/0048/01/14 որոշման 17-րդ կետը):

ՀՀ քրեական օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ «1. Պատժի տեսակներն են՝ 1) պատվավոր կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից, որակավորման դասից կամ պետական պարգևից զրկելը, 2) տուգանքը, 3) հանրային աշխատանքները, 4) որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը, 5) օտարերկրյա քաղաքացուն Հայաստանի Հանրապետության տարածքից վտարելը, 6) զինվորական ծառայության մեջ սահմանափակումը, 7) ազատության սահմանափակումը, 8) կարճաժամկետ ազատազրկումը, 9) կարգապահական գումարտակում պահելը, 10) ազատազրկումը, 11) ցմահ ազատազրկումը»:

ՀՀ քրեական օրենսգրքի 67-րդ հոդվածի համաձայն՝ «1. Ազատազրկումը դատապարտյալին քրեակատարողական հիմնարկում անազատության մեջ պահելու ձևով հասարակությունից որոշակի ժամկետով մեկուսացնելն է, որը կարող է նշանակվել սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում:

2. Ազատազրկումը նշանակվում է 3 ամսից 20 տարի ժամկետով:

3. Ազատազրկման նվազագույն ժամկետը սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում կարող է պակաս լինել 3 ամսից:

4. Անզգույշ հանցագործության համար ազատազրկումը չի կարող գերազանցել 10 տարին:

5. Առաջին անգամ ոչ մեծ ծանրության հանցագործություն կատարած անձը չի կարող դատապարտվել ազատազրկման»:

Դատարանը, հաշվի առնելով Մերուժան Առաքելյանի կատարած հանցանքի հետևանքները, հանցագործության բնույթը և հանրության համար վտանգավորության աստիճանը, խախտված հասարակական հարաբերության սոցիալական նշանակությունը, այդ ոլորտում պետության քրեական քաղաքականության ուղղվածությունը, նրա անձը բնութագրող



տվյալը, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները, պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 2-րդ մասում թվարկված մյուս հանգամանքները, գտնում է, որ մեղադրյալ Մերուժան Առաքելյանը իր կատարած՝ ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության համար ենթակա է պատժի ազատազրկման ձևով՝ 2 (երկու) տարի ժամկետով, ինչը տվյալ դեպքում համաչափ է կատարված կոնկրետ հանցագործության բնույթին, վտանգավորության աստիճանին, այն կատարելու հանգամանքներին, հանցավորի անձին, բխում է ՀՀ քրեական օրենսգրքի 7-րդ հոդվածով սահմանված՝ արդարության և պատասխանատվության անհատականացման, պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներից և բավարար է ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածով սահմանված պատժի նպատակների իրականացման տեսանկյունից:

Դատարանը գտնում է, որ մեղադրյալի նկատմամբ որոշած պատժաչափը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 71-րդ և 78-րդ հոդվածներով ամրագրված քրեական պատժի և պետական հարկադրանքի «Համաչափության» սկզբունքին:

Դատարանն, անդրադառնալով լրացուցիչ պատիժ նշանակելու հարցին, արձանագրում է, որ մեղադրյալ Մ.Առաքելյանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարք, որը կապված է ճանապարհային երթևեկության և անվտանգության կանոնները խախտելու հետ: Այս առումով Դատարանն ուշադրության է հրավիրում այն հանգամանքին, որ Նոր օրենսգրքով որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը որպես լրացուցիչ պատիժ դատարանի նախաձեռնությամբ նշանակվում է ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների համար՝ 1-3 տարի ժամկետով այն դեպքում, երբ ելնելով հանցավորի պաշտոնավարության կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու ժամանակ նրա կատարած հանցանքի բնույթից, հնարավոր չի համարում անձի կողմից հետագա ժամանակահատվածում որոշակի պաշտոններ զբաղեցնելը կամ որոշակի գործունեությամբ զբաղվելը: Այսինքն, ի տարբերություն Նախկին օրենսգրքի՝ պարտադիր լրացուցիչ պատժատեսակը ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների դեպքում Նոր օրենսգրքի կարգավորումների համապատասխան ոչ թե վերացվել է, այլ վեր է ածվել ֆակուլտատիվի:

Լ.Վարդանյանի և Զ.Այվազյանի գործով կայացված որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) պատիժ նշանակելու սկզբունքի բովանդակությունն ընդգրկում է դատապարտյալի, տուժողի և հասարակության վերաբերմունքը նշանակված պատժի նկատմամբ: Ուստի պատիժ նշանակելիս արդարության սկզբունքը դատարանից պահանջում է ողջամտորեն հաշվի առնել արդարության մասին վերոնշյալ սուբյեկտների կարծիքը, որը պետք է կիրառվի պատժի նշանակման մյուս սկզբունքների, ինչպես նաև պատժի նպատակների համատեքստում (...):»

(...) ՀՀ քրեական օրենսգրքը չի մասնավորեցնում և չի տարբերակում հիմնական և լրացուցիչ պատիժ նշանակելու սկզբունքները և նպատակները, որից հետևում է, որ անկախ այն հանգամանքից, թե անձի նկատմամբ նշանակվում է հիմնական, թե հիմնական և լրացուցիչ պատիժ իրար հետ համակցված, դատարանը բոլոր դեպքերում պարտավոր է առաջնորդվել քրեական օրենսգրքում ամրագրված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով (օրինականություն, արդարություն, պատժի անհատականացում, մարդասիրություն) և պատժի նպատակներին՝ հասնելու օրենսդրական կարգադրանքով: Այլ կերպ՝ պատժի նշանակման ընդհանուր սկզբունքներն ու նպատակները հավասարապես վերաբերում են ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ պատիժներին: Օրենքով սահմանված պատժի նպատակներին հասնելու տեսանկյունից դատարանը, հաշվի առնելով հանցագործության բնույթը, արարքի հանրային



վտանգավորության աստիճանը և հանցագործի անձը բնութագրող, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները, մեղավոր ճանաչված անձի նկատմամբ պետք է նշանակի այնպիսի պատիժ (հիմնական կամ հիմնական և լրացուցիչ), որը կբխի վերոթվարկած չափանիշներից և կապահովի պատժի նպատակների լիարժեք իրացվելիությունը: (...) [Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու՝ որպես պատժի տեսակի] բովանդակությունը մի շարք զրկանքների և սահմանափակումների առաջացման մեջ է: Դրանք են, ի թիվս այլնի, որոշակի ժամանակով անձի աշխատանքային իրավունակության, պաշտոնի, մասնագիտական գործունեության կամ զբաղվածության տեսակի ազատ ընտրության իրավունքի սահմանափակումները, որոնք որոշ դեպքերում առաջացնում են որակավորման կորուստ, որոշակի նյութական կորուստ, առավելությունների և արտոնությունների սահմանափակում: Այս պատժատեսակի հիշյալ պատժիչ տարրերն արտացոլում են դրա վառ արտահայտված կանխարգելիչ ուղղվածությունը:

ՀՀ քրեական օրենսգրքի 52-րդ հոդվածը սահմանում է երկու առանձին պատժամիջոցներ, առաջին՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու իրավունքից զրկում և որոշակի գործունեությամբ զբաղվելու սահմանափակում: Առաջինի կիրառման դեպքում դատապարտյալը զրկվում է որոշակի պաշտոններ զբաղեցնելու իրավունքից: Իսկ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու դեպքում սահմանափակվում է որոշակի մասնագիտական կամ այլ գործունեությամբ մեղավոր ճանաչված անձի զբաղվելու իրավունքը:

Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու նպատակներից է՝ կանխել տվյալ բնույթի հանցագործության հետագա կատարման հավանականությունը, քանի որ այս պատժատեսակը նշանակվում է հատուկ կարգավիճակ ունեցող կամ որոշակի գործունեությամբ զբաղվող անձանց նկատմամբ: Այլ կերպ՝ տվյալ պատժատեսակի կիրառումը բխում է այն հանցագործությունների կանխման անհրաժեշտությունից, որոնք այս կամ այն առումով կապված են հանցավորի պաշտոնական դիրքի կամ մասնագիտական կամ այլ գործունեության հետ:

Այլ խոսքով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը կիրառվում է ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի նորմի սանկցիայով նախատեսված սահմաններում՝ նպատակ հետապնդելով կանխելու զբաղեցրած պաշտոնից կամ որոշակի գործունեությամբ զբաղվելուց բխող համանման հանցագործությունների կատարման հավանականությունը (...)» (տե՛ս Լիլիթ Վարդանյանի և Զարինե Այվազյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ԵԱԲԴ/0016/01/14 որոշման 12-13-րդ, 14.1-րդ կետերը):

Մեջբերված ՀՀ վճռաբեկ դատարանի որոշմամբ արձանագրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո վերլուծելով սույն գործի փաստական հանգամանքները՝ Դատարանն արձանագրում է, որ մեղադրյալ Մ.Առաքելյանը կատարել է տրանսպորտային միջոց վարելու հետ կապված հանցագործություն, որի պարագայում վերջինիս նկատմամբ հարկավոր է հիմնական պատժի հետ մեկտեղ նշանակել նաև ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված լրացուցիչ պատիժ՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկելը 1 տարի ժամկետով: Այս հետևությունը, ի թիվս այլոց, պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու նպատակներից է՝ կանխել տվյալ բնույթի հանցագործության հետագա կատարման հավանականությունը, քանի որ այս պատժատեսակը նշանակվում է հատուկ կարգավիճակ ունեցող կամ որոշակի գործունեությամբ զբաղվող անձանց նկատմամբ: Այլ կերպ՝ տվյալ պատժատեսակի կիրառումը բխում է այն հանցագործությունների կանխման



անհրաժեշտությունից, որոնք այս կամ այն առումով կապված են հանցավորի պաշտոնական դիրքի կամ մասնագիտական կամ այլ գործունեության հետ:

Միաժամանակ, անդրադառնալով մեղադրյալի նկատմամբ նշանակվող ազատազրկման ձևով պատիժը կրելու հարցին, դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի համաձայն՝ «1. Եթե դատարանը հանցանք կատարած անձի նկատմամբ կարճաժամկետ ազատազրկման, կարգապահական գումարտակում պահելու կամ ազատազրկման ձևով պատիժ նշանակելիս հանգում է հետևության, որ պատժի նպատակների իրականացումը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:

2. Պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքով պատժից կարող է ազատվել նաև այն անձը, որի նկատմամբ սույն օրենսգրքի 72-րդ հոդվածով նշանակվել է օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ, կամ կիրառվել է համաձայնեցման կամ համագործակցության կամ արագացված վարույթ:

3. Հանցագործությունների համակցության դեպքում պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցը որոշվում է համակցությամբ վերջնական պատիժը նշանակելուց հետո:

4. Պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ որոշում կայացնելիս դատարանը պետք է հաշվի առնի հետևյալ հանգամանքները.

- 1) անձին մեղսագրվող հանցանքի բնույթն ու վտանգավորությունը,
- 2) պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները,
- 3) հանցանք կատարածի անձը,
- 4) պատճառած վնասը հատուցելու կամ այլ կերպ հարթելու պահանջի բացակայությունը կամ այն հատուցած կամ այլ կերպ հարթած լինելու հանգամանքը, եթե հանցագործությամբ վնաս է պատճառվել:

5. Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը սահմանում է փորձաշրջան՝ 1-5 տարի ժամկետով, որի ընթացքում անձը գտնվում է դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի հսկողության ներքո և պարտավոր է կատարել դատարանի որոշմամբ սահմանված պարտականությունները: Փորձաշրջանի ընթացքում դատարանի կողմից նշանակվող պարտականություններն են՝

1) կրթական և մշակութային ծրագրերին մասնակցելը, այդ թվում՝ նոր արհեստ կամ մասնագիտություն ձեռք բերելը,

2) առանց դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի համաձայնության Հայաստանի Հանրապետության տարածքը չլքելը,

3) բնակության վայրը փոխելու դեպքում դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնին սեղմ ժամկետում իր նոր բնակության վայրի հասցեն հայտնելը,

4) ոգելից խմիչքներից (ալկոհոլից), թմրամիջոցներից, հոգեմետ (հոգեներգործուն), թունավոր կամ այլ թմրեցնող նյութերից ունեցած կախվածությունից բուժման կուրս անցնելը,

5) հանրագույտ աշխատանքներում ներգրավվելը,

6) սեռավարակից կամ շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությունից բուժման

կուրս անցնելը,

7) տուժողի, նրա ընտանիքի անդամի, նրա խնամքի տակ գտնվող անձի կամ դատարանի կողմից նշված այլ անձի հետ որևէ շփում ունենալու արգելքը,

8) որոշակի վայրեր այցելելու արգելքը,

9) հոգեբանական-վերականգնողական կուրս անցնելը:



6. Դատարանը դատապարտյալի վրա դնում է սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված պարտականություններից մեկը կամ մի քանիսը կամ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ՝ այլ պարտականություններ, որոնք կարող են նպաստել նրա վերասոցիալականացմանը: (...):»:

Անդրադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու չափանիշներին՝ Վճռաբեկ դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել այն մասին, որ պատիժը կարող է պայմանականորեն չկիրառվել, եթե առկա է դատարանի համոզվածությունը, վստահությունը, որ ամբաստանյալի ուղղումը հնարավոր է առանց իրական պատիժ կրելու: Դատարանի նման համոզվածությունը, վստահությունը պետք է հիմնվի օբյեկտիվ գոյություն ունեցող այնպիսի տվյալների վերլուծության վրա, որոնք բնութագրում են արարքը, հանցավորի անձը և վկայում պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերի առկայության մասին: Վճռաբեկ դատարանը մշտապես հաստատել է իրավական դիրքորոշումն առ այն, որ չնայած պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված ՀՀ քրեական օրենսգրքին ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ սահմանափակում չի նախատեսել, սակայն դատարանը, ղեկավարվելով ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով, ինչպես նաև նպատակ ունենալով ապահովելու ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասում նշված պատժի նպատակներն իրագործելու հնարավորությունը, անձի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս պարտավոր է, ի թիվս այլոց, հաշվի առնել հանցագործության հանրային վտանգավորության աստիճանը և բնույթը (հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի վերաբերյալ, ի թիվս այլ որոշումների, մանրամասն տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Գարուշ Մադաթյանի գործով 2009 թվականի փետրվարի 17-ի թիվ ԵՇԴ/0029/01/08, Արմեն Շահբազյանի գործով 2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԵՇԴ/0143/01/13, Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի գործով 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշումները)՝ հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են օրենքով պահպանվող հասարակական հարաբերության բնույթը, մեղքի ձևը և տեսակը, պատճառված վնասի չափը, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները, հանցագործության հանգամանքները, եղանակը, գործիքներն ու միջոցները, նպատակներն ու շարժառիթները և այլն (տե՛ս թիվ ԵԿԴ/0039/01/15, ԱՐԴ/0031/01/15, ԵԱԴԴ/0038/01/15, ԵԿԴ/0130/01/15, ՍԴ/0094/01/15, ՍԴ3/0201/01/15 գործերով որոշումները):

Ս.Աղախանյանի գործով որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է. «(...) [3]ուրաքանչյուր գործով նշանակված պատժի կրման նպատակահարմարության հարցը լուծելիս դատարանը, ի թիվս այլ հանգամանքների (...), պետք է բազմակողմանի վերլուծության ու գնահատման ենթարկի հանցավորի անձը: (...) Պատասխանատվության և պատժի անհատականացման և հետևաբար նաև նշանակված պատժի կրման հարցի լուծման համար էական նշանակություն ունեն հանցավորի անձի ոչ միայն ֆիզիկական ու հոգեկան, այլև սոցիալական առանձնահատկությունների վերաբերյալ փաստական տվյալները» (տե՛ս Ս.Աղախանյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԱԿԴ/0082/01/12 որոշման 19-րդ կետը):

Անդրադառնալով պատիժ նշանակելիս և այն կրելու նպատակահարմարության հարցը լուծելիս հանցավորի անձը բնութագրող տվյալները գնահատման ենթարկելու կարևորությանը՝ Վճռաբեկ դատարանը մշտապես ընդգծել է, որ պատասխանատվության և պատժի անհատականացման հիմք են ոչ միայն կատարված արարքի հանրային վտանգավորության բնույթն ու աստիճանը, այլև հանցավորի անձը բնութագրող սոցիալ-հոգեբանական, սոցիալ-

ժողովրդագրական, քրեաբանական և քրեաիրավական, ֆիզիկական հատկությունների համակցությունը (ընտանեկան դրությունը, վարքագիծը՝ աշխատանքում և կենցաղում, աշխատունակությունը, առողջական վիճակը, տարիքը, սեռը, դատվածությունը և այլն): Մասնավորապես Վճռաբեկ դատարանը փաստել է հանցավորի ընտանեկան դրությունը, վերջինիս ընտանիքի կյանքի պայմանների վրա նշանակված պատժի ազդեցությունը, նրա խնամքին այլ անձանց առկայությունը, սոցիալական միջավայրում նրա զբաղեցրած տեղն ու դիրքը, սոցիալական միջավայրում նրա ունեցած բնութագիրը և մի շարք այլ հանգամանքների վերաբերյալ փաստական տվյալները գնահատման ենթարկելու անհրաժեշտությունը (6): (տե՛ս Հ.Հարությունյանի գործով 2007 թվականի մարտի 30-ի թիվ ՎԲ-50/07« Ն.Սարգսյանի գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0042/01/11« Ս.Սարգսյանի գործով 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ՍԴ/0109/01/12« Ս.Աղախանյանի գործով 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԱՎԴ/0082/01/12« Զ.Շիրվանյանի գործով 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԱԲԴ/0091/01/14 և այլ որոշումները):

Անդրադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի (ընդունված՝ 2003թ. ապրիլի 18-ին) 242-րդ հոդվածով նախատեսված հանցավոր արարք կատարած անձի նկատմամբ պատիժ նշանակելու, ինչպես նաև նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցերին՝ Գ.Ղազարյանի գործով որոշմամբ Վճռաբեկ դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները. «[քննարկվող] հանցագործությունների վերաբերյալ գործերով վերոնշյալ հարցերը լուծելիս դատարանները, ի թիվս այլոց, պետք է հատկապես հաշվի առնեն՝

ա. հանցագործության կատարման եղանակը և հանգամանքները, հանցագործության կատարման մեջ ամբաստանյալի մեղավորության աստիճանը, հանցանքը կատարելուն նպաստող պայմանները (մանրամասն տե՛ս Արամ Սահակյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԳԴ1/0003/01/10 որոշման 20-րդ կետը)

բ. ճանապարհային երթևեկության կանոնների խախտման բնույթը: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ճանապարհային երթևեկության կանոնների խախտման բնույթը բացահայտելու համար դատարանները, յուրաքանչյուր դեպքում ելնելով կոնկրետ գործի փաստական հանգամանքներից, պետք է գնահատման ենթարկեն, թե ճանապարհային երթևեկության կանոնների տվյալ խախտումը ինչպես ընդհանուր առմամբ, այնպես էլ կոնկրետ իրադրությունում որքանով էր հավանական դարձնում ճանապարհային երթևեկության մասնակիցների կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու հնարավորությունը (տե՛ս, mutatis mutandis, Էդմոն Ասատրյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի օգոստոսի 24-ի թիվ ԵԷԴ/0201/01/11 որոշման 18-րդ կետը):

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ, ի թիվս այլոց, լուսացույցի կամ կարգավորողի արգելող ազդանշանին չենթարկվելը, սահմանված արագությունը գերազանցելը, տրանսպորտային միջոցը ոչ սթափ վիճակում վարելը, տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված անձանց կողմից տրանսպորտային միջոցներ վարելը վտանգ են առաջացնում ճանապարհային երթևեկության մասնակիցների համար և առավել հավանական դարձնում հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը (տե՛ս Արամ Սահակյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԳԴ1/0003/01/10 որոշման 20-րդ կետը):

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ խախտված սույն կանոնների (...) մատնանշումը չի հանգում, որ ճանապարհային երթևեկության այլ, վերը չմատնանշված կանոնների խախտումները չեն կարող վտանգ ստեղծել ճանապարհային երթևեկության մասնակիցների համար, առավել հավանական դարձնել վերջիններիս կյանքին և առողջությանը վնաս պատճառելու հնարավորությունը: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն հարցը



յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է ինքնուրույն գնահատման ենթարկել՝ ելնելով կոնկրետ գործի փաստական հանգամանքների վերլուծությունից,

գ. ճանապարհային երթևեկության կանոնների խախտման նկատմամբ հանցավորի դրսևորած հոգեբանական վերաբերմունքը: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանն իր նախադեպային իրավունքում փաստել է, որ դատարանները հատուկ ուշադրություն պետք է դարձնեն այն հանգամանքին, թե տրանսպորտային միջոցի վարորդը ճանապարհային երթևեկության կանոնների խախտումն արդյոք գիտակցաբար է թույլ տվել (տե՛ս Էդմոն Ասատրյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի օգոստոսի 24-ի թիվ ԵԷԴ/0201/01/11 որոշման 18-րդ կետը):

Չարգացնելով սույն իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ կարևոր նշանակություն ունի այն հարցի պարզումը, թե ճանապարհային երթևեկության կանոնները Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 10-11-րդ հոդվածների իմաստով դիտավորությամբ, թե անզգուշությամբ են խախտվել: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ճանապարհային երթևեկության կանոնները դիտավորությամբ խախտելը վկայում է հանցավորի անձնավորության և կատարված հանցագործության հանրային վտանգավորության առավել բարձր աստիճանի մասին,

դ. հանրորեն վտանգավոր հետևանքների նկատմամբ հանցավորի դրսևորած հոգեբանական վերաբերմունքը: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը Էդմոն Ասատրյանի գործով որոշման շրջանակներում փաստել է. «(...) [Հ]անրորեն վտանգավոր հետևանքների նկատմամբ դրսևորված անզգույշ մեղքի (...) տարատեսակները, ելնելով գործի փաստական հանգամանքների առանձնահատկություններից, տարբեր կերպ են բնորոշում հանցավորի անձնավորության և կատարված հանցագործության վտանգավորության աստիճանը: Այսպես՝ հանցավոր անփութության դեպքում անձը չի նախատեսում իր արարքի արդյունքում ծանր հետևանքների առաջացման հնարավորությունը, հետևաբար չի գիտակցում նաև իր կողմից տվյալ իրադրությունում թույլ տրված խախտման վտանգավորությունը: Մինչդեռ հանցավոր ինքնավստահության դեպքում անձը գիտակցում է, որ իր կողմից թույլ տրված խախտման արդյունքում կարող են վտանգավոր հետևանքներ առաջանալ, այսինքն՝ նա գիտակցում է իր արարքի վտանգավորությունը և, չնայած դրան, թույլ է տալիս նշված խախտումը, ինչը վկայում է հանցավորի անձնավորության և կատարված հանցագործության վտանգավորության առավել բարձր աստիճանի մասին» (տե՛ս Էդմոն Ասատրյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի օգոստոսի 24-ի թիվ ԵԷԴ/0201/01/11 որոշման 17-րդ կետը), ե. հանցագործությամբ պատճառված վնասը (մանրամասն տե՛ս Արամայիս Հովհաննեսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ ԳԴ/0014/01/14 որոշման 15-րդ կետը):

գ. հանցանքի կատարումից անմիջապես հետո, ինչպես նաև հետագայում հարուցված քրեական գործի քննության ընթացքում հանցավորի դրսևորած վարքագիծը: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ դատարաններն ուշադրության պետք է արժանացնեն այն, թե հանցագործության կատարումից անմիջապես հետո ամբաստանյալն արդյոք անհրաժեշտ օգնություն է ցուցաբերել տուժողին, կամ արդյոք քրեական գործի քննության ընթացքում ինքնակամ ներկայացել է վարույթն իրականացնող մարմին, դեպքի վերաբերյալ տվել ճշմարտացի, ինքնախոստովանական ցուցմունքներ, արդյոք որոշակի քայլեր է ձեռնարկել տուժողի կամ նրա հարազատների հետ հաշտվելու ուղղությամբ կամ ինքնակամ հատուցել է հանցագործության արդյունքում տուժողի բուժման կամ հուղարկավորության ծախսերը (տե՛ս, mutatis mutandis, Արամ Սահակյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԳԴ/0003/01/10 որոշման 22-րդ կետը):



(...) Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածով նախատեսված հանցավոր արարք կատարած անձանց նկատմամբ պատժի տեսակի ու չափի, ինչպես նաև նշանակված պատիժը կրելու նպատակահարմարության հարցի վերաբերյալ եզրահանգումները սույն որոշման նախորդ կետում նշված հանգամանքների՝ իրենց ամբողջության մեջ վերլուծության հիման վրա կառուցելն ունի առանձնապես կարևոր նշանակություն: Ուստի այդ հանգամանքները հաշվի չառնելը, դրանք անտեսելը կարող է հանգեցնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածով սահմանված պահանջներին չհամապատասխանող դատական ակտի կայացմանը (տե՛ս, *mutatis mutandis*, Արտակ Գասպարյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ ՇԴ3/0014/01/15 որոշման 13-րդ կետը): (տե՛ս Գագիկ Ղազարյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ԵԱԲԴ/0075/01/16 որոշման 13-14-րդ կետերը):

ՀՀ Վճռաբեկ դատարանն՝ իր 2007 թվականի հունիսի 12-ի թիվ ՎԲ 124/07 որոշմամբ Սուսաննա Ներսիսյանի վերաբերյալ գործով ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման կապակցությամբ արտահայտել է իրավական դիրքորոշում, որ վկայակոչած հոդվածի կիրառումը հանցագործության տեսակի հետ կապված որևէ սահմանափակման չի ենթարկվում: Դրա կիրառումը սահմանափակված չէ նաև հանցավոր արարքի վտանգավորության աստիճանով ու բնույթով, ինչպես նաև անձանց շրջանակով, որոնց նկատմամբ այն չի կարող կիրառվել: ՀՀ Վճռաբեկ դատարանը միաժամանակ նշել է. «ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման հիմնական պայմանը պատճառաբանված լինելն է: Նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը պետք է հանգամանորեն քննության առնի ինչպես հանցագործության կատարման, այնպես էլ հանցավորի անձին վերաբերող բոլոր հանգամանքները: Կարևորն այն է, որ հանգի հիմնավոր եզրակացության, որ դատապարտյալի ուղղումը հնարավոր է առանց նշանակված պատիժը կրելու»:

ՀՀ Վճռաբեկ դատարանը մեկ այլ՝ Գուրգեն Մարտիրոսյանի վերաբերյալ գործով 2008 թվականի փետրվարի 01-ի թիվ ՎԲ-01/08 որոշման մեջ նշել է, որ պատիժը պայմանականորեն չկիրառելու իրավական հիմքերը բացահայտելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածում սահմանված իրավադրույթներն անհրաժեշտ է մեկնաբանել նաև ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված պատժի նպատակների համատեքստում, այսինքն՝ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշում կայացնելիս իրավասու դատարանը յուրաքանչյուր դեպքում պետք է քննարկի նաև պատժի՝ սոցիալական արդարության վերականգնման և պատժի ենթարկված անձի ուղղվելու նպատակների իրացման հարցը: ՀՀ Վճռաբեկ դատարանը միաժամանակ նշել է, որ սոցիալական արդարությունը վերականգնելու և պատժի ենթարկված անձի ուղղվելու մասին կարող է վկայել հանցագործությունից հետո հանցավորի դրսևորած վարքագիծը, մասնավորապես՝ տուժողին պատճառած վնասը հարթելը կամ այն հարթելուն ուղղված ողջամիտ միջոցներ ձեռնարկելը:

ՀՀ Վճռաբեկ դատարանը Ջոն Սարգիս Շիրվանյանի և Արսեն Մուրադյանի վերաբերյալ գործով 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԱԲԴ/0091/01/14 որոշմամբ արձանագրել է, որ յուրաքանչյուր դեպքում պատժի կրման նպատակահարմարության հարցը որոշելիս հանցագործության հանրային վտանգավորության բնույթի և աստիճանի համատեքստում կարևոր նշանակություն ունի հանցավորի անձը բնութագրող տվյալների ամբողջական վերլուծությունը: Մասնավորապես, հանցավորի անձը դրականորեն բնութագրող սոցիալ-հոգեբանական, սոցիալ-մոտիվացիոն, հատկանիշները, հանցագործությունից հետո դրսևորած դրական վարքագիծը (կատարված իրավաբաժնի համար զոջալը, ճշմարտացի ցուցմունքներ տալը, քննությանը չխոչընդոտելը, պատժապահ վնասը հատուցելը և այլն) կարող են վկայել, որ պատժի նպատակների իրագործման տեսակետից բացակայում է պատիժը փաստացի կրելու անհրաժեշտությունը: Այլ խոսքով՝



հանցավորի անձը բնութագրող տվյալները բացահայտելու և օբյեկտիվորեն հաշվի առնելու դատարանի պարտականությունն ուղղակիորեն բխում է ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի տրամաբանությունից, որի համաձայն՝ պատժի նպատակը, սոցիալական արդարությունը վերականգնելուց բացի, դատապարտյալի ուղղումն է և նոր հանցագործությունների կանխումը:

Թեև ՀՀ վճռաբեկ դատարանը վերագրյալ իրավական դիրքորոշումները արտահայտել է 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված քրեական օրենսգրքի իրավակարգավորումների համատեքստում, սակայն Դատարանն արձանագրում է, որ այն վերաբերելի մասով կիրառելի է նաև 2022 թվականի հուլիսի 1-ից գործող քրեական օրենսգրքի պայմաններում:

ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական վերլուծությունների համատեքստում քննության առնելով Մերուժան Գևորգի Առաքելյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի կիրառման իրավաչափության հարցը, Դատարանը, բացահայտելով մեղադրյալի կատարած արարքի հանրային վտանգավորության աստիճանը և բնույթը, օրենքով պաշտպանվող հարաբերությունների սոցիալական նշանակությունը, հանցավորի անձը բնութագրող հանգամանքները, մեղքի ձևը և տեսակը, հանցագործության նպատակը և շարժառիթը, հանցագործության կատարման եղանակը և հանգամանքները, հանցագործության կատարման մեջ մեղադրյալի մեղավորության աստիճանը, հանցանքը կատարելուն նպաստող պայմանները, ինչպես նաև պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքների առկայությունը, պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը գտնում է, որ մեղադրյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը փաստացի կրելու և այդ կերպ հնարավոր է հասնել ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածով սահմանված պատժի նպատակներին՝ սոցիալական արդարության վերականգնմանը, պատժի ենթարկված անձի վերասոցիալականացմանը և հանցագործությունների կանխմանը: Տվյալ դեպքում պատիժը պայմանականորեն չկիրառելը բխում է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 7-րդ և 69-րդ հոդվածներով սահմանված՝ արդարության և պատասխանատվության անհատականացման, պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներից:

Մերուժան Առաքելյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի կիրառմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելը, ի թիվս վերևում նշված հանգամանքների Դատարանն առավելապես պայմանավորում է նաև այն հանգամանքներով, որ մեղադրյալն առաջին անգամ է հանցանք կատարել, նախկինում դատապարտված կամ արատավորված չի եղել, ընդ որում գնահատման են արժանի նաև հանրորեն վտանգավոր հետևանքների նկատմամբ հանցավորի դրսևորած հոգեբանական վերաբերմունքը՝ այն, որ անձը չի նախատեսել իր արարքի արդյունքում ծանր հետևանքների առաջացման հնարավորությունը, հետևաբար չի գիտակցել նաև իր կողմից տվյալ իրադրությունում թույլ տրված խախտման վտանգավորությունը, հանցանքի կատարումից անմիջապես հետո, ինչպես նաև հետագայում հարուցված քրեական գործի քննության ընթացքում հանցավորի դրսևորած վարքագիծը, մասնավորապես՝ տուժողների հետ հաշտվելու ուղղությամբ քայլեր ձեռնարկելը, ինքնակամ հանցագործության արդյունքում տուժողներին պատճառված վնասի փոխհատուցում տալը, խնամքին անչափահաս երկու երեխաների առկայությունը: Սույն հանգամանքների հաշվառմամբ Դատարանն իրատեսական է համարում, որ անձի վերասոցիալականացումը և սոցիալական արդարության վերականգնումը կարող է ապահովվել նաև պատիժը պայմանականորեն չկիրառելով: Դատարանը սույն պարագայում գնահատման առարկա է դարձնում նաև տուժողների դիրքորոշումը, քանի որ սոցիալական արդարության վերականգնումը որպես պատժի նպատակ ենթադրում է նաև անձին, հասարակությանը, հանցագործությամբ պատճառված վնասի՝ պատժի միջոցով հնարավորինս հատուցում: Ընդ որում, սոցիալական արդարության վերականգնման առումով կարևոր նշանակություն ունի նաև տուժողի դիրքորոշումը: Սույն քրեական գործով տուժողները հայտնել են,



որ Մերութան Առաքելյան ինքնակամ փոխհատուցել է հանցագործությամբ պատճառված վնասը 1.500.000 ՀՀ դրամի չափով և իրենք հաշտվել են նրա հետ, վերջինից որևէ պահանջ կամ նրա նկատմամբ որևէ բողոք չունեն և չեն ցանկանում, որպեսզի նրա նկատմամբ կիրառվի ազատագրկման ձևով պատիժ:

Փորձաշրջանի ընթացքում անհրաժեշտ է մեղադրյալ Մերութան Առաքելյանի վարքի նկատմամբ վերահսկողությունը դնել ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության վրա՝ սահմանելով պարտականություններ՝ առանց դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն չիրականացնող իրավասու մարմնի համաձայնության Հայաստանի Հանրապետության տարածքը չլքելը և բնակության վայրը փոխելու դեպքում դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնին սեղմ ժամկետում իր նոր բնակության վայրի հասցեն հայտնելը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 464.4-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարության ծախսերը մեղադրյալից ենթակա չեն բռնագանձման:

Անդրադառնալով գույքային հայցերի լուծման հարցին՝ Դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 157-րդ հոդվածի համաձայն՝ 1. Գույքային հայցը քննվում է քրեական վարույթի շրջանակներում՝ ըստ վերջինիս ընդդատության:

Նույն օրենսգրքի 158-րդ հոդվածի համաձայն՝ 1. Գույքային հայցը հարուցվում, ապացուցվում և լուծվում է սույն օրենսգրքի դրույթներով սահմանված կանոններով:

2. Քաղաքացիական դատավարության օրենսդրության նորմերի կիրառումը թույլատրվում է, եթե դրանք չեն հակասում սույն օրենսգրքին, և գույքային հայցով վարույթի համար անհրաժեշտ են կանոններ, որոնք նախատեսված չեն սույն օրենսգրքով:

3. Քրեական վարույթի շրջանակներում գույքային վնասի հատուցման հիմքը, պայմանները, ծավալը և եղանակները սահմանվում են քաղաքացիական, բնապահպանական, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական և նյութական այլ օրենսդրությամբ:

4. Քրեական վարույթում գույքային հայցի վրա չեն տարածվում քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված հայցային վաղեմության ժամկետները և հետադարձ պահանջի (ռեգրեսի) իրավունքը, ինչպես նաև քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ սահմանված հակընդդեմ հայց հարուցելու կանոնները:

5. Գույքային հայց հարուցելու համար պետական տուրք չի գանձվում:

6. Եզրափակիչ դատական ակտը գույքային հայցի մասով կատարվում է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:

Նույն օրենսգրքի 159-րդ հոդվածի համաձայն՝ 1. Քրեական վարույթի ընթացքում հատուցման ենթակա են մեղադրյալին վերագրվող արարքի հետևանքով պատճառված հետևյալ վնասները.

1) անմիջականորեն պատճառված գույքային վնասը.

2) կորցված, վնասված կամ ոչնչացված գույքը փոխարինելու կամ նորոգելու համար կատարված ծախսերը.

3) առողջությունը վերականգնելու, ներառյալ լրացուցիչ սննդի, հավելյալ խնամքի համար կատարված ողջամիտ ծախսերը.

4) մահացած տուժողի կամ տուժող ճանաչվելու ենթակա անձի հուղարկավորության, քաղաքացիական պատանաքարի տեղադրման, ինչպես նաև գերեզմանի բարեկարգման համար կատարված ողջամիտ ծախսերը:



ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի համաձայն՝ 1. Մասնավոր շահերի պաշտպանության համար գույքային հայցը հարուցում և պաշտպանում է տուժողը կամ նրա ներկայացուցիչը, իսկ պետական շահերի պաշտպանության համար՝ դատախազը:

2. Գույքային հայցը կարող է հարուցվել քրեական գործը դատարան հանձնելուց հետո՝ մինչև նախնական դատախոսների ավարտը: Վարույթին ավելի ուշ ներգրավված տուժողն իրավասու է գույքային հայց հարուցելու տուժող ճանաչվելուց անմիջապես հետո:

3. Գույքային հայց հարուցվում է մեղադրյալի կամ այն անձի դեմ, որի վրա կարող է գույքային պատասխանատվություն դրվել մեղադրյալի գործողությունների համար: (...):

Նույն օրենսգրքի 162-րդ հոդվածի համաձայն՝ 1. Գույքային հայցը լուծվում է եզրափակիչ դատական ակտով՝ լրիվ կամ մասնակի բավարարվում է, ներառյալ հաշտության համաձայնության տեսքով, մերժվում է կամ թողնվում առանց լուծման:

2. Արդարացման դատավճիռ կայացնելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ վարույթը կարճելու դեպքում, ելնելով հայցի ապացուցվածությունից, դատարանն իրավասու է հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու:

3. Գույքային հայցը մերժելու, լրիվ կամ մասնակի բավարարելու մասին՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը բացառում է նույն անձանց միջև նույն առարկայի մասին հայցի քննությունը քաղաքացիական դատավարության կարգով:

4. Առանց լուծման թողնված գույքային հայցը կարող է հետագայում հարուցվել քաղաքացիական դատավարության կարգով:

Վերոգրյալ իրավամորմների վերլուծության համատեքստում Դատարանն արձանագրում է, որ տուժողներ՝ Լյովա Վոլոդյայի Մխիթարյանի և Հայաստանի Արտուշի Խաչատրյանի կողմից ներկայացված գույքային հայցերը պետք է մերժել, քանի որ վերջիններս լրացուցիչ դատախոսներում հայտնեցին, որ մեղադրյալի կողմից փոխհատուցվել է իրենց պատճառված վնասը և իրենք չեն պնդում իրենց կողմից ներկայացված գույքային հայցերը: Իսկ ինչ վերաբերում է մահացած տուժողի փոխարեն տուժող ճանաչված Վլադիմիր Մխիթարյանի կողմից ներկայացված գույքային հայցին, ապա Դատարանը, նկատի ունենալով այն, որ տուժողը իր կողմից ներկայացված պահանջը հիմնավորող որևէ փաստական տվյալ Դատարանին չներկայացրեց, միևնույն ժամանակ հայտնեց, որ մեղադրյալը իրեն որոշակի փոխհատուցում տվել է և նա վերջինիցս որևէ պահանջ չունի և կբավարարվի միայն ապահովագրական ընկերության կողմից օրենքով սահմանված կարգով իրեն որպես փոխհատուցում տրվող գումարով, իսկ հայցը մերժելու դեպքում տուժողը զրկվելու է նույն առարկայի մասին հայցի քննությունը քաղաքացիական դատավարության կարգով ներկայացնելու հնարավորությունից, ուստի Դատարանը գտնում է, որ այն պետք է թողնել առանց լուծման:

Քննարկելով ապացույցների տնօրինման հարցը՝ Դատարանը գտնում է, որ դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո իրեղեն ապացույցներ ճանաչված և ՀՀ ՆԳՆ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Անիի բաժնի պահպանվող հատուկ տարածքում գտնվող «OPEL ZAFIRA 1.8L» մակնիշի 36 AQ 827 հաշվառման համարանիշի ավտոմեքենան պետք է վերադարձնել սեփականատիրոջը՝ Վլադիմիր Լյովայի Մխիթարյանին, իսկ «HYUNDAI ELANTRA 1.8L» մակնիշի 04 XX 505 հաշվառման համարանիշի ավտոմեքենան նույնպես պետք է վերադարձնել սեփականատիրոջը՝ Մերուժան Գևորգի Առաքելյանին:

Քննարկելով խափանման միջոցի հարցը՝ Դատարանը գտնում է, որ մեղադրյալ Մերուժան Գևորգի Առաքելյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց բացակայելու արգելքը պետք է թողնել ավտոփոխ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը, իսկ դրանից հետո պետք է վերադարձնել:



Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 33-րդ, 347-350-րդ, 464.1-րդ-464.5-րդ հոդվածներով՝ Դատարանը.

Վ Ճ Ռ Ե Ց

Մերոժան Գևորգի Առաքելյանին մեղավոր ճանաչել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի 2-րդ մասով և նրա նկատմամբ որպես պատիժ նշանակել ազատազրկում 2 (երկու) տարի ժամկետով՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկելով 1 (մեկ) տարի ժամկետով:

ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի կիրառմամբ ազատազրկման ձևով նշանակված հիմնական պատիժը պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան 3 (երեք) տարի ժամկետով:

Փորձաշրջանի ընթացքում մեղադրյալ Մերոժան Գևորգի Առաքելյանի վարքի նկատմամբ վերահսկողությունը դնել ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության վրա՝ սահմանելով պարտականություններ՝ առանց դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի համաձայնության Հայաստանի Հանրապետության տարածքը չլքելը և բնակության վայրը փոխելու դեպքում դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնին սեղմ ժամկետում իր նոր բնակության վայրի հասցեն հայտնելը:

Մերոժան Գևորգի Առաքելյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ բացակայելու արգելքը, թողնել անփոփոխ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը, իսկ դրանից հետո՝ վերացնել:

Դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո իրեղեն ապացույցներ ճանաչված և ՀՀ ՆԳՆ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Անիի բաժնի պահպանվող հատուկ տարածքում գտնվող «OPEL ZAFIRA 1.8L» մակնիշի 36 AQ 827 հաշվառման համարանիշի ավտոմեքենան վերադարձնել սեփականատիրոջը՝ Վլադիմիր Լյովայի Մխիթարյանին, իսկ «HYUNDAI ELANTRA 1.8L» մակնիշի 04 XX 505 հաշվառման համարանիշի ավտոմեքենան վերադարձնել սեփականատիրոջը՝ Մերոժան Գևորգի Առաքելյանին:

Տուժողներ՝ Լյովա Վոլոդյայի Մխիթարյանի և Հայաստանի Արտուշի Խաչատրյանի կողմից ներկայացված գույքային հայցերը մերժել, իսկ մահացած տուժողի փոխարեն տուժող ճանաչված Վլադիմիր Լյովայի Մխիթարյանի կողմից ներկայացված գույքային հայցը թողնել առանց լուծման՝ վերջինիս իրավունք վերապահելով գույքային հայցը հետագայում հարուցելու քաղաքացիական դատավարության կարգով:

Վարության ծախսերի հարցը համարել լուծված:

Դատավճիռը, բացառությամբ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 373-րդ հոդվածով և 375-րդ հոդվածի 1-3-րդ մասերով, կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան այն ստանալու օրվանից հետո՝ մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ



ԱՐՓԻՆԵ ՇՏՈՅԱՆ